

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 234-Ա

4 օգոստոսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 31-ի N 1157-Ա, N 1158-Ա, N 1160-Ա, N 1161-Ա, N 1162-Ա, N 1164-Ա և N 1155-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 3-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Մարո Մինասյան», Արմավիրի մարզ, գ. Դալարիկ (ՀՎՀՀ 49593485).
- 2) Ա/Ձ «Ռաիսա Մկրտչյան», Սյունիքի մարզ, ք. Սիսիան Խանջյան 9/1բ (ՀՎՀՀ 79814349).
- 3) «ՍԱՄ» ՍՊԸ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Խանջյան 9/1ա (ՀՎՀՀ 09801121).
- 4) Ա/Ձ «Իրինա Գալստյան», Արարատի մարզ, ք. Արտաշատ Արարատյան 75 (ՀՎՀՀ 47764773).
- 5) Ա/Ձ «Սուսաննա Դանիելյան», Արարատի մարզ, ք. Արտաշատ, Իսակովի 76բ (ՀՎՀՀ 47738166).
- 6) Ա/Ձ «Ալվարդ Միրզոյան», Տավուշի մարզ, գ. Կողբ 1/5, (ՀՎՀՀ 70958162).
- 7) Ա/Ձ «Զաքարե Սարգսյան», Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան /188/1 (ՀՎՀՀ 57342131).
- 8) «Վարդալիս» ՍՊԸ, ք. Երևան, Տիգրան Մեծի 61 12 (ՀՎՀՀ 00057595).
- 9) «Վիլլա Հիլս» ՍՊԸ, Կոտայքի մարզ գ. Պտղնի, Պտղնի-1 այգեզանգված, 1 թաղամաս թիվ 35:

2. 72 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողին պատկանող մասնաճյուղի (հասցեում իրականացվող) գործունեության ծավալումը՝

1) «Ա/Ձ Արայիկ Սարկիսյան», Լոռու մարզ, ք. Վանաձոր, Աբովյան 1դ (ՀՎՀՀ 66960965):

3. 168 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողին պատկանող մասնաճյուղի (հասցեում իրականացվող) գործունեության ծավալումը՝

1) «Հռիփսիկ Էմինի Կարապետյան» ՍՊԸ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տ. Մեծի 34 (ՀՎՀՀ 06952932):

4. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

5. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

6. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-3-րդ կետերի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 04/08/20 17:09:28 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ